# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Շուշանիկ Հովհաննիսյան, Հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բաժնի պետ

**2. Գործուղման վայրը և ժամկետները**

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն, Սփրինգֆիլդ, Բոստոն, Սինսինատի, Արմհերսթ, Սանտա Ֆե, Լոս Անջելես), 2026 թ. սեպտեմբերի 19-հոկտեմբերի 10

**3. Հրավիրող կողմը**

Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետական դեպարտամենտ (Կրթական և մշակութային գործերի բյուրո, Միջազգային այցելուների առաջնորդության ծրագիր (IVLP))՝ Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանության առաջարկով:

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Գործուղման նպատակն էր միջազգային ծրագրի շրջանակում ուսումնասիրել ԱՄՆ-ի առաջավոր փորձը մշակութային ժառանգության պահպանության, թանգարանային և արխիվային հավաքածուների կառավարման, վերականգնման ու թվայնացման, պատմական հուշարձանների պաշտպանության և մշակութային արժեքների ապօրինի շրջանառության կանխարգելման ոլորտներում: Գործուղումն ուղղված էր մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացմանը, միջազգային փորձի փոխանակմանը, մշակութային ժառանգության պահպանության արդյունավետ մեխանիզմների ուսումնասիրմանը և ձեռք բերված փորձը հետագա աշխատանքային գործունեության մեջ կիրառելու հնարավորությունների բացահայտմանը:

**5. Քննարկված թեմաները**

- Մշակութային ժառանգության պահպանության և կառավարման միջազգային փորձի ուսումնասիրություն:
- Թանգարանային հավաքածուների պահպանության, վերականգնման և գիտական հետազոտությունների ժամանակակից մեթոդներ:
- Արխիվային նյութերի պահպանություն, թվայնացում և հանրային հասանելիության ապահովում:
- Պատմական շինությունների, հուշարձանների և պատմական միջավայրերի վերականգնում ու պահպանություն:
- Մշակութային արժեքների ծագման ուսումնասիրություն և ապօրինի շրջանառության կանխարգելում:
- Մշակութային ժառանգության պահպանության ոլորտում պետական, մասնավոր և համայնքային կառույցների համագործակցություն:
- Հնագիտական վայրերի պաշտպանություն և մշակութային արժեքների վնասման ու թալանի կանխարգելում:
- Մշակութային ժառանգության հանրահռչակում, կրթական ծրագրերի զարգացում և հանրային ներգրավվածության խթանում:
- Ավանդական արհեստների, տեղական մշակութային ինքնության և համայնքային ժառանգության պահպանում:
- Մշակութային ժառանգության տնտեսական ներուժի օգտագործում, զբոսաշրջության զարգացում և միջազգային մասնագիտական համագործակցության ընդլայնում:

## 6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

### Վաշինգտոն (սեպտեմբերի 19-24)

Մասնակցել եմ ծրագրի բացման հանդիպմանը՝ American Councils for International Education կազմակերպությունում: Այնուհետև այցելել եմ Սմիթսոնյան ինստիտուտի Ազգային ասիական արվեստի թանգարան, որտեղ կայացած մասնագիտական հանդիպման ընթացքում քննարկվել են մշակութային ժաոռանգության պահպանության, թանգարանային հավաքածուների կառավարման, գիտական հետազոտությունների և միջազգային համագործակցության հարցերը:

Սեպտեմբերի 22-ին մասնակցել եմ ԱՄՆ կառավարման դաշնային համակարգին նվիրված դասախոսությանը, այնուհետև այցելել Կոնգրեսի գրադարան, որտեղ ներկայացվել են հավաքածուների պահպանության, պահպանության գիտական մեթոդների, թվայնացման և թվային տեղեկատվության երկարաժամկետ պահպանման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Սեպտեմբերի 23-ին մասնակցել եմ ԱՄՆ Պետդեպարտամենտի մշակութային ժառանգության պահպանության և մշակութային արժեքների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող աշխատանքներին նվիրված հանդիպմանը: Այցելել եմ նաև ԱՄՆ Ազգային արխիվների և փաստաթղթերի վարչություն, որտեղ ծանոթացել եմ պատմական նշանակության փաստաթղթերի պահպանության, վերականգնման, թվայնացման և հանրության համար հասանելիության ապահովման գործընթացներին:

**Սփրինգֆիլդ և Բոստոն, Մասաչուսեթս նահանգ (սեպտեմբերի 24–29)**

Սփրինգֆիլդում նախատեսված մասնագիտական այցերի շրջանակում ուսումնասիրվել են պատմական շինությունների և տուն-թանգարանների պահպանության, կրթական հաստատությունների հետ համագործակցության, գրավոր ժառանգության պահպանման ու թվայնացման, ինչպես նաև ազգային և համայնքային մշակութային ինքնության ներկայացման ուղղությունները: Մասնավորապես, ծրագրում ներառված էին Էմիլի Դիքինսոնի թանգարանը, Իդիշ գրքի ազգային կենտրոնը և Լեհական բացահայտումների ու ուսումնառության կենտրոնը, որոնց գործունեությունն ուղղված է պատմական, գրական և նյութական մշակութային ժառանգության պահպանմանն ու հանրահռչակմանը:

Սեպտեմբերի 26-ին Բոստոնում նախատեսված ծրագրի շրջանակում կարևոր տեղ էր հատկացվել ԱՄՆ պատմության և անկախության համար նշանակալի վայրերի ուսումնասիրմանը: Ազատության արահետով նախատեսված շրջայցը նպատակ ուներ ծանոթանալու Ամերիկյան հեղափոխության պատմությանը, պատմական հուշարձանների պահպանության և զբոսաշրջային ու կրթական նպատակներով դրանց օգտագործման փորձին: Նախատեսված էր նաև մասնակցություն «Ruckus!» ինտերակտիվ պատմական ներկայացմանը՝ պատմական իրադարձությունների հանրահռչակման ժամանակակից մեթոդներին ծանոթանալու նպատակով:

Սեպտեմբերի 27-ին նախատեսված էր այցելություն «The Big E» տարածաշրջանային ցուցահանդես-տոնավաճառ, որը ներկայացնում է Նոր Անգլիայի վեց նահանգների մշակութային առանձնահատկությունները, ավանդույթներն ու գյուղական համայնքների կյանքը: Միջոցառումը կարևոր հնարավորություն էր դիտարկելու տարածաշրջանային ինքնության պահպանման, մշակութային բազմազանության ներկայացման և հանրային միջոցառումների միջոցով ժառանգության հանրահռչակման փորձը:

**Սինսինատի, Օհայո նահանգ (սեպտեմբերի 29 – հոկտեմբերի 2)**

Ծրագրի շրջանակում նախատեսված էր մասնագիտական այց Սինսինատի և Հյուսիսային Կենտուկիի տարածաշրջան: Ծրագրի հիմնական նպատակներն էին պատմամշակութային ժառանգության պահպանության ոլորտում պետական և մասնավոր կառույցների համագործակցության, իրավական պահանջների պահպանման, պատմական քաղաքային միջավայրերի վերակենդանացման և մշակութային ժառանգության տնտեսական ներուժի ուսումնասիրման ուղղությունները:

Ծանոթացել եմ Սինսինատիի պատմական ժառանգության պահպանության ասոցիացիայի գործունեությանը: Քննարկման հիմնական թեմաներն էին պետական մարմինների, համայնքային կազմակերպությունների, սեփականատերերի և ժառանգության պահպանության մասնագետների համագործակցությունը, պատմական շենքերի ու թաղամասերի պահպանությունը, հանրային իրազեկվածության բարձրացումը և տեղական նախաձեռնությունների աջակցությունը:

Մասնագիտական ծրագրում ներառված էր նաև Սինսինատիի արվեստի թանգարանի Մշակութային արժեքների հարցերով հանձնաժողովի գործունեության ուսումնասիրությունը: Հատուկ ուշադրություն էր նախատեսվում դարձնել թանգարանային հավաքածուների ծագման ուսումնասիրությանը, մշակութային

արժեքների օրինական ձեռքբերման և պահպանման գործընթացներին, ինչպես նաև ԱՄՆ դաշնային օրենսդրության պահանջների պահպանման մեխանիզմներին:
Ծրագրի մեկ այլ կարևոր ուղղություն էր Over-the-Rhine պատմական թաղամասի ուսումնասիրությունը: Այն դիտարկվում է որպես պատմական քաղաքային միջավայրի վերականգնման և մշակութային ժառանգության տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման օրինակ: Նախատեսված էր ծանոթանալ պատմական շենքերի պահպանման, դրանց նոր գործառույթներով օգտագործման և քաղաքային տարածքների վերակենդանացման գործընթացներին:

Բացի այդ, մասնակցել եմ մասնագիտական Heritage Ohio կազմակերպության տարեկան համաժողովին: Սա հնարավորություն էր Օհայո նահանգում պատմական ժառանգության պահպանության և քաղաքային կենտրոնների վերակենդանացման փորձին ծանոթանալու, ինչպես նաև զարգացնելու ոլորտային մասնագիտական կապերը:

**Սանտա Ֆե, Նյու Մեքսիկո նահանգ (հոկտեմբերի 2–7)**

Նյու Մեքսիկո նահանգ կատարված մասնագիտական այցի շրջանակում ծանոթացել եմ մշակութային ժառանգության պահպանության, պետական և մասնավոր հատվածների համագործակցության, պատմական վայրերի հանրահռչակման և մշակութային զբոսաշրջության զարգացման ամերիկյան փորձին:
Այցելել եմ Սանտա Ֆեի Ժողովրդական արվեստի միջազգային շուկա, որտեղ ներկայացվում են տարբեր ժողովուրդների արհեստագործական ավանդույթները: Միջոցառման ուսումնասիրությունը և կազմակերպիչների հետ հանդիպումը հնարավորություն էր ծանոթանալու ավանդական արհեստների պահպանման, արվեստագետների տնտեսական հնարավորությունների ընդլայնման, ձեռնարկատիրության խթանման և մշակութային ժառանգության միջոցով զբոսաշրջության զարգացման մեխանիզմներին:

Ծրագրում ներառված էր նաև այցելություն Museum Hill թանգարանային համալիր, որը միավորում է ամերիկյան հարավարևմտյան տարածաշրջանի մշակութային ժառանգությունը ներկայացնող թանգարաններ և հավաքածուներ: Ներկայացվեցին պետական կառույցների, մասնավոր ներդրողների և թանգարանների համագործակցության փորձը, ինչպես նաև մշակութային արժեքների ներկայացման միջոցով տեղական տնտեսական զարգացման հնարավորությունները:

Մասնագիտական հանդիպումների կարևոր ուղղություններից էր Նյու Մեքսիկո նահանգի Մշակութային հարցերի դեպարտամենտի Հնագիտական ուսումնասիրությունների գրասենյակի գործունեությունը: Քննարկման թեմաներն էին հնագիտական վայրերի ուսումնասիրությունը, պահպանությունը և դրանց վերաբերյալ գիտելիքների տարածումը: Նախատեսված էր նաև ծանոթացում Բանդելիերի ազգային հուշարձանի պահպանության փորձին, այդ թվում՝ հնագիտական տարածքների, ժայռապատկերների և պատմական բնակավայրերի պաշտպանության, ինչպես նաև մշակութային արժեքների վնասման ու գանձագողության կանխարգելման մեթոդներին:

Հետաքրքրական էր Սանտա Կլարա Պուեբլո համայնքի փորձը, որտեղ տեղական կառույցները համագործակցում են մշակութային նշանակություն ունեցող տարածքների պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխարգելման ուղղությամբ:

Հոկտեմբերի 3-ին այցելել եմ Ալբուկերկեի միջազգային օդապարիկների փառատոն, որը հնարավորություն տվեց ծանոթանալու խոշոր հանրային միջոցառումների կազմակերպման, տարածաշրջանի ճանաչելիության բարձրացման և զբոսաշրջության խթանման փորձին: Ծրագրի մշակութային բաղադրիչում ներառված էր նաև հանդիպում տեղի բնակիչների հետ՝ նպաստելով միջմշակութային հաղորդակցությանն ու փոխըմբռնմանը:

**Լոս Անջելես, Կալիֆոռնիա նահանգ, հոկտեմբերի 7–10**

Լոս Անջելես կատարված այցի ընթացքում ներկայացվել է թանգարանային հավաքածուների պահպանության, պահպանության գիտական մեթոդների կիրառման, մշակութային արժեքների ծագման ուսումնասիրության և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի ամերիկյան փորձը:

Մասնագիտական այցերի կարևոր ուղղություններից էր Ամերիկյան Արևմուտքի Օթրի թանգարանը, որտեղ ծանոթացել եմ պատմական և մշակութային հավաքածուների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, վերականգնման լաբորատորիաների գործոնեության և ամերիկյան պատմության հանրահռչակման մեթոդներին:

Ծրագրում ներառված էր նաև Լոս Անջելեսի շրջանի արվեստի թանգարան այցելությունը:

Մասնագիտական հանդիպումների շրջանակում նախատեսված էր ծանոթացում Լոս Անջելեսի շրջանի բեռնափոխադրումների ոլորտում հանցագործությունների բացահայտման մասնագիտացված խմբի գործունեությանը: Քննարկման հիմնական թեմաներն էին ապօրինի շրջանառության ցանցերի բացահայտումը, ինչպես նաև իրավապահ մարմինների և մասնավոր հատվածի համագործակցությունը:

Ծրագրի մեկ այլ ուղղություն էր Սանտա Մոնիկայի պատմական ժառանգության պահպանության կազմակերպության գործունեության ուսումնասիրությունը: Նախատեսված էր ծանոթանալ պատմական շինությունների բացահայտման և փաստագրման, պատմական արժեք ներկայացնող օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիության և տեղական մակարդակում պահպանության քաղաքականության իրականացման փորձին:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Գործուղման շրջանակում ամերիկյան առաջատար մասնագիտական կազմակերպությունների և մշակութային հաստատությունների ներկայացուցիչների հետ քննարկվել են հետագա համագործակցության ընդլայնման և առկա գործընկերային կապերի ամրապնդման հնարավորությունները: Քննարկվել են նաև համապատասխան կառույցների միջև աշխատանքային կապերի ձևավորման և խորացման, փորձագիտական խորհրդատվության, տեղեկատվության փոխանակման և հետագա համագործակցության հնարավոր ձևաչափերի հեռանկարները:

Ձեռք բերված մասնագիտական կապերը կարող են հիմք հանդիսանալ մշակութային ժառանգության պահպանության ոլորտում երկարաժամկետ գործընկերության

ձևավորման, առանձին հաստատությունների գործունեության զարգացման և ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման համար:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Շարունակել կապերը ամերիկյան մասնագիտական կազմակերպությունների և մշակութային հաստատությունների հետ՝ փորձի փոխանակման, խորհրդատվությունների և համատեղ նախաձեռնությունների իրականացման նպատակով, ուսումնասիրել և գնահատել գործուղման ընթացքում ներկայացված մեթոդների կիրառելիությունը հուշարձանների և մշակութային ժառանգության պահպանության, թանգարանային հավաքածուների կառավարման, վերականգնման և թվայնացման գործընթացներում:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

Շուշանիկ Հովհաննիսյան

13.10.2026 թ.